ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11)514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-10663 «10» 05 2021թ.

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ն. ՔՈՍԱԿՅԱՆԻՆ
Վեդի Ս. Վարդանյան 1-ին նրբ.5/1

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների հիման վրա՝ 17.03.2021 թվականին Երևանի քաղաքապետարանի և «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) միջև կնքվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9 » ծածկագրով «Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման ծառայությունների» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Երևանի քաղաքապետարանի կողմից ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հստատվել է 24.03.2021 թվականին 9 000 000 (ինը միլիոն) ՀՀ դրամի չափով: 07.04.2021 թվականին ընկերությանը «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/9 » ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը օրենքով սահմանված ժամկետում հաստատելու և ներկայացնելու համար, սակայն ընկերության կողմից հաստատված համաձայնագիրը սահմանված ժամկետում չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից

տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պայմանագրի 7.15-րդ կետի համաձայն «Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129